

6.**ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
HISTORY
ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ****ԴՐՈՆ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ
(1920թ. ապրիլ-մայիս)****Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ պատմության ամբիոնի վարիչ*

Ղարաբաղ-Ջանգեզուրը Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորելու հիմնահարցը մեկընդմիջտ լուծելու հանձնարարականով ՀՀ կառավարությունը 1919թ. դեկտեմբերի 20-ին Ջանգեզուր է գործուղում Դրոյին՝ իր էքսպեդիցիոն (500-600 զինվորներ) զորամասով: Դրոն ստանձնում է Ղարաբաղ-Ջանգեզուրի զինական ուժերի ընդհանուր հրամանատարությունը: Նա Ջանգեզուրում Գ. Նժդեհի, Յապոնի (Հովհաննես Պարոնյան), Արտեմ Խանգատյանի և մյուս հրամանատարների ու քաջակորով զանգեզուրցիների հետ համագործակցությամբ երկու օրվա ընթացքում հրաշալիորեն է լուծում Ջանգեզուրը մինչև Հագարու գետը թուրքերից մաքրելու գործը:¹

Ադրբեջանի կառավարությունը չէր հաշտվում Ջանգեզուրում իր բանակի կրած ծանր պարտության հետ: Իր զորքերի պարտվելու գլխավոր պատճառներից մեկը նա համարում էր Լեռնային Ղարաբաղը: Այդ իսկ պատճառով մուսավաթ պարագլուխները որոշել էին շտկել «սխալը», այն է՝ վերջնականապես նվաճել Արցախը, ապահովել թիկունքը, ապա նոր միայն պատերազմել Ջանգեզուրի դեմ: Ադրբեջանի կառավարությունը տենդագին պատրաստություն է տեսնում Ղարաբաղ ներխուժելու համար: Այդ նպատակի համար Ադրբեջանը ոչ միայն իր զինական հիմնական ուժերը, այլև ահագին թվով զինված հրոսակախմբեր, «կամավորների» անվան տակ, կենտրոնացրեց Լեռնային Ղարաբաղում: Ստույգ տվյալներով 1920թ. գարնանը Ղարաբաղում կենտրոնացված էր ավելի քան 10 հազար զինվոր: Արագ կերպով կազմակերպվեց քրդական մի դիվիզիա: Շուշի ժամանեց Նուրի փաշան՝ 10 թուրք սպաների ուղեկցությամբ: Մարտի 11-ին և 12-ին Բաքվից Ջեբրայիլի վրայով Ղարաբաղ և Ջանգեզուր ուղարկվեց 90 վազոն՝ բեռնված զենքով և զինամթերքով:²

¹ Տե՛ս **Հ. Գևորգյան**, Դրո, Երևան, 2007, էջ 383:² Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923гг. "Сборник документов и материалов", Ереван, 1992, с. 431.

Ամրանալով Ղարաբաղի ռազմավարական նշանակություն ունեցող կետերում՝ Ադրբեջանը փորձեց զինաթափել արցախահայությանը: Բաքվի ղեկավարությունը մարտի 20-ին վերջնագիր է ներկայացնում արցախցիներին՝ զինաթափվել և ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

Մարտի 20-ին թուրք-թաթարական զորքերը սկսեցին բռնությամբ զինաթափել բնակչությանը: Մարտի 22-ին Ադրբեջանը անցավ ծավալուն հարձակման: Սկսվեց արցախահայության գոյապայքարը: Մարտ-ապրիլ ամիսներին մուսավաթական բանակը և մուսուլմանական մոլեռանդ խուժանը, թուրք սպաների հրամանատարությամբ, անհամար կոտորածներ ու ավերածություններ պատճառեցին Արցախ աշխարհին: Հիմնովին ավերվեցին ավելի քան երեք տասնյակ գյուղեր ու շեներ: Սպանվեցին հազարավոր խաղաղ բնակիչներ: Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կիզակետը դարձավ Շուշիի հայ բնակչության սպանդը: Ոչ ստույգ տվյալներով մարտի 22-23-ին Շուշիում զոհված հայերի թիվը հասնում էր մոտ 8 հազարի:³

Հայաստանի կառավարությունը վճռեց զինված օգնության հասնել Արցախի արյունաքամ եղած ժողովրդին: ՀՀ կառավարության կարգադրությամբ 1920թ. ապրիլի 14-ին Ջանգեզուրի կողմից Արցախի Վարանդա գավառ մտան Դրոյի զորամասերը: Դրոյի զորակայանը հաստատվեց Սարուշեն գյուղում:⁴ Ապրիլի 16-ին նա կոչով դիմեց Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը. «Ես մտա Ղարաբաղ ապրիլի 14-ին, այն ժամանակ, երբ արդեն հրդեհը սկսված էր, և երբ բավական հայ գյուղեր ավեր մատնված էին թշնամու կողմից, և երբ Ղարաբաղի գյուղացիությունը հերոսաբար դիմադրելուց հետո, նորից մնացել էր իր դիրքերում, կուրծքը դեմ տված թշնամու գնդակներին: Դու պիտի ըմբռնես, Ղարաբաղի հայ ժողովուրդ, որ Ադրբեջանի ծրագիրն է վերացնել հայ բնակչությանը, շարունակել տաճկական փաշաների որոշումը՝ տիրել Ղարաբաղին, ոտքի տակ տալ Ջանգեզուրը և ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունն ու այսպիսով վերացնել մահմեդական աշխարհի միջև ընկած այդ քաղաքակրթված ժողովուրդը:

Ես եկել եմ ձեր մեջ այն խոր համոզումով և հաստատ որոշումով, որ հենված ձեր վճռականության վրա և միացած ձեր քաջարի զինվորների հետ, պետք է հաղթանակենք թշնամուն: Ես վճռել եմ մնալ ձեր մեջ, կռվել ձեզ հետ միասին և ազատություն ու հաղթանակ տոնել այստեղ: Հիշեցեք, որ պետք է միայն մի քանի հարյուր զոհ՝ վճռականապես փրկելու Ղարաբաղը:

Այսօր մենք բոլորս,- ասում է դաշնակցության երևելի այրը,- ձեզ հետ միասին ձեռք ձեռքի տված, պիտի շարունակենք կռիվը մինչև վերջնական հաղթանակ:

Ամուր կաց, Ղարաբաղի հայ գյուղացիություն, և միշտ դիրքերի մեջ ու պատրաստ՝ թշնամուն հետ շարտելու և մեր ազատությունը ձեռք բերելու»:⁵ Այս երկարաշունչ և ոգեշնչող մեջբերումը վկայում է, որ հայկական զորամասերը Ղարաբաղ են մտել իսկապես այն բանից հետո, երբ ապստամբության հրդեհը տարած-

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, առաջին մաս, թ. 179, երկրորդ մաս, թ. 245, ՀԱԱ -2, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 145:

⁴ Կա այլ տարբերակ՝ Դրոն նստավայր է դարձրել Վարանդայի Ղարաբուլախ գյուղը: Տե՛ս **Ք. Ուլուբաբյան**, Արցախահայության գոյապայքարը, Երևան, 1994, էջ 88:

⁵ ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 6, թ. 4:

վել էր ողջ Արցախ աշխարհում, որ հայկական զորամասերի Արցախ մտնելը, բնական անհրաժեշտությունից բացի, թելադրված էր նաև Ղարաբաղի հայության ֆիզիկական գոյությանը սպառնացող վտանգը կանխելու անհրաժեշտությամբ:

Դրոյի Ղարաբաղ մտնելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց գավառի բոլոր շրջաններում: Սարուշեն, Դրոյի մոտ պատգամավորություններ էին գալիս նույնիսկ ամենահեռավոր շրջաններից և բոլորն էլ մի բան էին խնդրում. «Մենք պատրաստ ենք լսելու ձեզ, հրամայեցեք ինչ կամենում եք, մենք ուրախությամբ կկատարենք, մենք պատրաստ ենք կռվելու մինչև վերջին շունչը»:⁶ Հայկական զինուժը, լեգենդար Դրոյի զլխավորությամբ, 3-4 օրվա ընթացքում Արցախն ազատագրեց թշնամուց: Ղարաբաղ-Ջանգեզուրի գեներալ-նահանգապետ Խոսրով բեկ Սուլթանովը չհամարձակվեց դիմադրություն ցույց տալ Հայաստանի Հանրապետության զորամասերին և իր զինված կազմավորումներով պատսպարվեց շրջափակման մեջ գտնվող Շուշիում: Արցախում Դրոյին սպասվում էին լարված օրեր: Այլևս անկարելի էր երկիրը կառավարել անիշխանության պայմաններում: Այնպես որ Արցախը Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս հռչակելը և համահայկական կառավարության ենթակայության ներքո Արցախի տեղական մարմինների ստեղծումը դարձավ բնական անհրաժեշտություն: Կազմվեց Ղարաբաղի ժամանակավոր կառավարություն (Վարիչների խորհուրդ), որի կազմի մեջ մտան տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ: Ղարաբաղի փաստացի ղեկավար Դրոյի հրամանով նշանակվեցին կոմիսարներ, որոնք կոչված էին կազմակերպելու գավառի ներքին կյանքը: 1920թ. ապրիլի 18-ին Ներքին Թաղավարդ գյուղում բացվեց Դիզակի և Վարանդայի հայ ազգաբնակչության ներկայացուցիչների ժողովը՝ Արշավիր Քամայանի նախագահությամբ: Ղարաբաղում տիրող ընդհանուր իրավիճակի մասին զեկուցումով հանդես եկավ Արսեն Յովհաննիսյանը: Այնուհետև, լսվեցին ներիքն գործերի կոմիսար Ասատուր Ավետիսյանի, պարենի մատակարարման ընդհանուր կառավարիչ Խաչատուր Մելքունյանի, աշխատանքի և երկրագործության հարցերի կառավարիչ Արշավիր Քամայանի, Վարանդայի և Դիզակի բժշկասանիտարական գործերի կառավարիչ Լյուդվիգ Տեր-Գրիգորյանի զեկուցումները:

Ժողովի եզրափակիչ նիստին մասնակցեց և ընդարձակ ճառով հանդես եկավ Դրոն: Նա կոչ արեց նեցուկ կանգնել նորաստեղծ կառավարությամբ և անել հնարավոր ամեն ինչ, թիկունքը կարգի բերելու ու ամրապնդելու համար:

Ժողովից հետո ընտրվեցին երկու նոր կոմիսարներ՝ մեկը պարենավորման, մյուսը՝ փախստականների գործերի գծով:

Ղարաբաղի ժամանակավոր կառավարության ստեղծումով, նրա աշխատավորության պայքարը ձեռք բերեց ավելի լուրջ ու կազմակերպված բնույթ: Ստեղծվեց բանակի ընդհանուր հրամանատարություն՝ Դրոյի զլխավորությամբ: Ղարաբաղի և Ջանգեզուրի միջև սկսվեց ազատ հաղորդակցություն: Վերոհիշյալ գավառների կապն ու հաղորդակցության ուղիների անվտանգությունը հանձնարարվում է Յապոնին:

1920թ. ապրիլի 23-ին Ներքին Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ ժամանակավոր կառավարության անդրանիկ նիստը, որը վարում էր Հայաստանի Հան-

⁶ Նույն տեղում, ֆ. 314, ց. 1, գ. 34, թթ. 267-268:

րապետության քաղաքացիական մասի ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը: Նիստի օրակարգում դրված էր երկու հարց: Առաջինը Հայաստանի կառավարությունից Դրոյի անունով ստացված հեռագիրն էր, որով առաջարկվում էր ընտրել ներկայացուցիչներ Թիֆլիսում կայանալիք Անդրկովկասյան հանրապետությունների կոնֆերանսին մասնակցելու համար: Մյուսը՝ Ղարաբաղի կողմնորոշման հարցը: Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ, նիստը ընտրեց երեք հոգուց բաղկացած պատվիրակություն: Արցախահայության կողմնորոշման հարցի կապակցությամբ բոլոր ելույթ ունեցողները, արտահայտելով ժողովրդի միասնական կանքը, պաշտպանեցին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու գաղափարը:⁷

Նիստում ընթերցվեց Դրոյի հրամանը զինակոչ հայտարարելու մասին, որին կառավարությունը տվեց իր համաձայնությունը: Վարանդայում և Դիզակում 21-25 տարեկան երիտասարդության զորահավաք անցկացվեց: Շնորհիվ զորահավաքի Դրոյի բանակի անձնակազմի թիվը կտրուկ ավելացավ: Նրա դրոշի տակ արդեն անձնակազմի թիվը կտրուկ ավելացավ: Նրա դրոշի տակ արդեն կային 3000 զինվորներ ու կամավորներ:⁸

Ղարաբաղ է հասնում նաև Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան)՝ Կապանի իր զորամասով և տեղավորվում Դիզակի շրջանում:

Ղարաբաղի նորաստեղծ ժամանակավոր կառավարությունը շարունակում էր հաստատվել Արցախի բոլոր շրջաններում: Ապրիլի 24-ին Խաչեն-Ջիվանջի ուղարկվեցին զնդապետ Ջ. Մեսյանը և Գ. Ղարազյոզյանը՝ կազմակերպելու համար զինվորական և քաղաքացիական իշխանություններ:⁹

Արցախահայության քաղաքական կյանքում վճռորոշ նշանակություն ունեցավ 9-րդ համագումարը: Այն հրավիրվեց 1920թ. ապրիլի 25-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում և տևեց մինչև ապրիլի 29-ը: Համագումարը միաձայն ընդունեց հետևյալ որոշումը.

Չեղյալ հայտարարել արցախահայության 7-րդ համագումարի անունից Ադրբեջանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը, ելնելով այն բանից, որ այն խախտվել է Ադրբեջանի զորքերի կողմից Շուշիում և գյուղերում հայ բնակչության դեմ կազմակերպած հարձակմամբ:

Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս:

Խնդրել Հայաստանի Հանրապետության Մոսկվայում գտնվող պատվիրակությանը՝ համագումարի որոշման մասին հայտնել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը:¹⁰

Այդ օրերին Ղարաբաղի ժամանակավոր կառավարության կոչով համագումարներ և ժողովներ էին տեղի ունենում Արցախի գավառներում, գավառակներում և գյուղերում: Ժողովրդի ներկայացուցիչները միաձայն որոշումներ էին կայացնում՝ ընդունել Հայաստանի Հանրապետության կողմնորոշումը և ոչ մի դեպ-

⁷ Տե՛ս ՀԱԱ-2, ֆ. 4033, ց. 5, գ. 498, թթ. 2-6:

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս «Հայրենիք», հոկտեմբեր, 1923, էջ 124:

¹⁰ Տե՛ս **Յ. Աբրահամյան**, Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 98:

քում, և ոչ մի պայմանով՝ Ադրբեջանի կառավարությունը:¹¹

1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Բաքվի բոլշևիկյան հեղաշրջումից հետո ռուսական կարմիր բանակի զորամասերը մոտեցան Արցախի սահմաններին:

Ադրբեջանի խորհրդայնացումը և խորհրդային իշխանության հետ Արցախի հայ և ադրբեջանցի բոլշևիկների համագործակցությունը փոխեցին իրադարձությունների ընթացքը՝ գավառը ընկնելու էր Ադրբեջանի ազդեցության տակ:

Ղարաբաղում վիճակը ապակայունացնելու, Հայաստանի կառավարությանը և դաշնակցական կուսակցությանը վարկաբեկելու ու հեղինակագրկելու միտումով, Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կովկասի երկրային կոմիտեն սադրիչ կոչով դիմեց Լեռնային Ղարաբաղի բնակչությանը. «Դաշնակցականները ուղարկել են Ղարաբաղ ահագին գումարներ կամավորական խմբեր կազմելու համար, որոնց գլխին կանգնած են տեղական դաշնակցականները: Ընկեր բանվորներ և գյուղացիներ, հզոր խորհրդային Ռուսաստանի անունից... զգուշացնում ենք ձեզ. մի թույլ տվեք, որ դավաճան դաշնակցականները զցեն ձեզ այդ արյունոտ գարշելի գործի մեջ»:¹² Բաքվի բոլշևիկյան հեղաշրջման հաջորդ օրը, այսինքն՝ ապրիլի 29-ին «կարմիր դիմակ» հագած Սուլթանովը Արցախի բոլոր գավառապետներին հղեց ժամուցագիր այն մասին, որ ապրիլի 28-ին Ադրբեջանը հռչակվել է անկախ խորհրդային հանրապետություն: Այդ կապակցությամբ նա պահանջեց գավառապետներից բնակչությանը տեղյակ պահել այդ մասին և դրա առիթով կազմակերպել հանդիսավոր միտինգներ:¹³

Բոլշևիկների «կառքին լծված» Սուլթանովը սկսում է «կոմունիստական սերմեր» շաղ տալ Արցախ աշխարհում: Ապրիլի 29-ին և 30-ին նրա նախաձեռնությամբ հեղկոմներ ստեղծվեցին Ղարաբաղի մի շարք վայրերում՝ Շուշիում, Կարյազինոյում, Ասկերանում և այլուր: Ապրիլի 29-ին ստեղծվեց Ղարաբաղի միացյալ հեղկոմ, որի նախագահ հռչակվեց Սուլթանովը:¹⁴

Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը Դրաստամատ Կանայանի ղեկավարությամբ հետևողական ու անզիջում պայքար էր մղում երկրի առջև կանգնած խնդիրները բնակչության կամքին համապատասխան լուծելու համար:

1920թ. մայիսի 3-ին Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը քննարկեց Ղարաբաղի և Ջանգեզուրի փոխհարաբերության հարցը, որը երկուստեք մեղադրանքի առարկա էր դարձել: Ղարաբաղցիները զանգեզուրցիներին անհիմն կերպով մեղադրում էին պասիվության մեջ, իսկ զանգեզուրցիները՝ ղարաբաղցիներին՝ դավաճանության մեջ: Հարցի համակողմանի քննարկումից հետո, միստը որոշեց Ղարաբաղը ենթարկել Ջանգեզուրի նահանգապետությանը և այդպիսով՝ Արցախն ու Ջանգեզուրը միասին կազմեն Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:¹⁵

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 39-40:

¹² Տե՛ս ՀԱԱ -2, ֆ. 1, ց. 1, գ. 3, ք. 3:

¹³ Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923гг. , с. 445-446.

¹⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, ք. 57:

¹⁵ ՀԱԱ-2, ֆ. 4033, ց. 5, գ. 498, ք. 14-16:

Սուլթանովի հեղկոմի նախագահ դառնալը ծանր տպավորություն գործեց Արցախի հայության վրա: Նախկին մուսավաթականի ու Օսմանյան թուրքիայի հավատարիմ ծառայի մաշկափոխությունը բոլորին ի տես դարձնելու նպատակով 1920թ. մայիսի 6-7-ին Լեռնային Ղարաբաղի գյուղացիության պաշտպանության կոմիտեն գավառի աշխատավորության անունից հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին, պատճենը՝ Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովին: Հեռագրում ասված էր, որ հայ աշխատավոր գյուղացիությունը լիովին ողջունում է արյունահեղությանը վերջ տալու և խաղաղ կյանքին անցնելու վերաբերյալ Ղարաբաղի հեղկոմի կոչը, որը, սակայն, վստահություն չի ներշնչում: «Վստահություն չկա, քանի որ Ղարաբաղի 360 հազար գյուղացիությունը ներկայումս էլ հարկադրված է լինել մարտադիրքերում, որովհետև Շուշիի հեղկոմից ծանուցագիրը նա ստացել է այն պահին, երբ գնդացիների ու հրանոթների որոտը շարունակում է ոչնչացնել խաղաղ հայ բնակչությանը և ընդհանուր աղետի մեղավորները չեն ենթարկվել պատասխանատվության:

Շուշիի հեղկոմի առաջարկությանը մենք չենք հավատում»:¹⁶

Ադրբեջանի կառավարող շրջանները համոզվեցին, որ երբեք և ոչ մի պայմանով հնարավոր չէ ընկճել արցախցու ըմբոստ ոգին ու նրա անկոտրում կամքը: Նարիմանովի կառավարությունը ցանկացավ ճնշում գործադրել Հայաստանի Հանրապետության վրա:

Մայիսի 8-ին Բաքվից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի անունով ստացվեց ռադիոհեռագիր: Ադրբեջանի կառավարությունը կտրուկ պահանջում էր հայկական զորամասերը դուրս բերել Ղարաբաղի սահմաններից:¹⁷

Մինչ Հայաստանի կառավարությունը ուղիներ էր որոնում վիճահարույց հարցերի խաղաղ կարգավորման համար, Շուշիի և Ջանգեզուրի շրջաններում հայ-մուսավաթական կոտորածները կանխելու պատրվակի տակ 1920թ. մայիսի 11-ին, Կովկասյան ճակատի հրամանատարության հրամանով, 11-րդ կարմիր բանակի ձախաթկյան զորամասերը շարժվեցին Նախիջևան – Օրդուբադ - Շուշիի շրջաններ, մինչև խառը հանձնաժողովի կողմից Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային հարցերի լուծվելը:¹⁸

Մայիսի 12-ին Շուշի մտավ 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի 281-րդ գունդը՝ հրամանատար Աբուզարովի և զինկոմ Գայդալովի ղեկավարությամբ:¹⁹ Ղարաբաղ եկան կարմիր բանակի մի շարք բարձրաստիճան սպաներ:

Օգտվելով Ղարաբաղի ծանր կացությունից, Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը նրան ներկայացրեց վերջնագիր, որով պահանջեց երեք օրվա ընթացքում ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը:²⁰

Այսպիսով, երբ Լեռնային Ղարաբաղում իշխանությունը աստիճանաբար

¹⁶ “Нагорный Карабах в 1918-1923гг.”, с. 457.

¹⁷ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 561, թթ. 44-46:

¹⁸ Տե՛ս “Нагорный Карабах в 1918-1923гг.”, с. 464-465.

¹⁹ Տե՛ս **3. Արբախյան**, Նշվ. աշխ., էջ 43:

²⁰ Տե՛ս “Нагорный Карабах в 1918-1923гг.”, с. 465.

անցնում էր հեղկոմների ձեռքը, իսկ կարմիր բանակի զորամասերը հսկում էին Արցախի ռազմավարական կարևորագույն կետերի վրա, և Ադրբեջանի կառավարությունն էլ վերջնագրային լեզվով պահանջում էր երեք օրվա ընթացքում ենթարկվել իրեն, երկրամասի ժամանակավոր կառավարությունն անհրաժեշտ համարեց հրավիրել գավառական համագումարներ և քննարկել ստեղծված պայմաններում արցախահայության անելիքները:

Մայիսի 14-ին Ղարաբաղի ժամանակավոր կառավարության հրահանգով Դիզակի գավառի բոլոր գյուղերի ներկայացուցիչները հավաքվեցին Տոդ գյուղում, ուր տեղի ունեցավ շրջանային համագումար: Կառավարության ներկայացուցիչներ Արսեն Միքայելյանը (Տեր-Յովհաննիսյան) և Նիկոլայ Իսախանյանը հանդես եկան զեկուցումով Ադրբեջանի հիշյալ վերջնագրի մասին: Ծավալվեց մտքերի լայն փոխանակում, և համագումարը միաձայն որոշեց.

1. Ադրբեջանի վերջնագիրը ամենից առաջ համարել հայերի գլխին նոր աղետներ բերելու առիթ:

2. Արարատյան կառավարությունը համարել որպես հարազատ և Ձանգեզուրի հետ համատեղ մտնել Արարատյան Հանրապետության մեջ:²¹

Նույն օրը Հաղորտի գյուղում տեղի ունեցած Վարանդայի շրջանային համագումարը զայրույթով դատապարտեց Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի «խաղերը» Լեռնային Ղարաբաղում և կտրականապես հրաժարվեց Արցախը Ադրբեջանի տարածք ճանաչելու մոտուլման ու քրիստոնյա բոլշևիկների պահանջը:²² 1920թ. մայիսի 18-ին Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի գլխավորած պատվիրակությունը (անդամներ՝ 281-րդ գնդի հրամանատարի օգնական Պարնան և նույն գնդի հրահանգիչ-կազմակերպիչ Կայդալով) Շուշի քաղաքից մեկնեց Վարանդայի շրջանի Ղարաբուլաղ գյուղ և հանդիպում ունեցավ Դրո Կանայանի հետ: Պատվիակության ղեկավար Սահակ Տեր-Գաբրիելյանը Օրջոնիկիձեի անունից վճռականապես պահանջեց Դրո Կանայանից, որ հայկական զորամասերը դուրս բերվեն Լեռնային Ղարաբաղից, քանի որ Ռուսաստանը մտադիր է Ղարաբաղ մտցնել կարմիր զորքեր: Ղարաբաղ - Ձանգեզուրի հայկական զորքերի գլխավոր հրամանատար Դրոն պատասխանեց, որ այդ քայլը հակասում է Խորհրդային Ռուսաստանի հայտարարած ազգերի ինքնորոշման սկզբունքին: Արցախահայությունը արտահայտել է իր կամքը և վերամիավորվել է մայր Հայաստանի հետ, իսկ հիմա պահանջ է դրվում նրան անջատել ու միացնել Ադրբեջանին: Դրոն ավելացնում է նաև, որ այդպիսի լուրջ հարցի վերաբերյալ բանակցելու և վճիռ կայացնելու լիազորություն ինքը չունի, հետևաբար այդ մասին պետք է տեղյակ պահի իր կառավարությանը:²³

Հանդիպման արդյունքների մասին մայիսի 21-ին Դրոն հեռագրեց Հայաստանի կառավարությանը, որը Երևանում ստացվեց մայիսի 29-ին: Այդ օրերին «կարմիր» Ադրբեջանի հին ու նոր ղեկավարները, ապավինելով Խորհրդային Ռուսաստանի զենքին, նորանոր զորամասեր ու ռազմական տեխնիկա էին տեղափո-

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 465-466:

²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 561, թթ. 44-46:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, 2-րդ մաս, թ. 336:

խում Ղարաբաղ, նրա հայ բնակչությանը ծնկի բերելու համար: Յենց այդ մասին է խոսվում Դրոյի 1920թ. մայիսի 21-ի հեռագրում, որում ասված է, որ թշնամին շարունակում է նոր ուժերով ամրապնդել իր դիրքերը Դիզակի, Կարազինոյի, Յադրութի, Ջիվանշիրի ուղղությամբ:²⁴ Այդ օրերին Ղարաբաղում ռուսական զենքին համահավասար իր ավերիչ դերն էր կատարում նաև հակահայկական ու հակաղաշնակցական քարոզչությունը, որը ծավալել էին մահմեդական ու քրիստոնյա բոլշևիկները: Օգտագործելով քարոզչության բոլոր միջոցները՝ նրանք ջանում էին բնակչության մեջ այն համոզումը ստեղծել, թե Լեռնային Ղարաբաղը տնտեսապես սերտորեն կապված է Դաշտային Ղարաբաղի և Խորհրդային Ադրբեջանի մյուս շրջանների, մանավանդ Բաքվի հետ, հետևաբար, կործանարար է Ղարաբաղի համար տնտեսապես թույլ զարգացած Յայաստանի հետ միավորվելը, քանի որ վերջինս ի վիճակի չի լինի օգնել ուտքի կանգնելու տնտեսապես ծանր կացության առջև կանգնած Ղարաբաղին: Կեղծիքի և բնակչությանը մոլորության մեջ զցելու, նրա նկատմամբ ուժ ու բռնություն գործադրելու քաղաքականությունը տվեց իր արդյունքը՝ վերջնականապես բարոյալքեց արցախահայությանը: Ահա թե այդ մասին ինչ է ասված վերոհիշյալ հեռագրում.«Ռուսական բանակների մոտենալը Ջիվանշիրին, Թարթառ գյուղի գրավումը և հարյուրավոր կարմիրների մուտք գործելը Մերկուրդիպոր և Քասապետ գյուղերը, վերջնականապես բարոյալքեցին մեր գյուղացիությանը: Ջիվանշիրում հռչակվեցին խորհրդային կարգեր: Խաչենը վարակվել է բոլշևիզմով: Այսօր գիշեր այնտեղ են ուղարկել մի հարյուրյակ, հուսով ենք, որ դեռ Խաչենը կպահպանենք և կփրկենք փոխգնդապետ Մեսյանին և հրամանատարական կազմին, որոնց վտանգ է սպառնում: Վարանդայում և Դիզակում առայժմ հանգիստ է: Անհնարին է, որ հայ գյուղացին դիմադրություն ցույց տա ռուս բոլշևիկներին»:²⁵

1920թ. մայիսի 22-ին տեղի ունեցավ Ղարաբաղի ժամանակավոր կառավարության վերջին նիստը, որը քննության առավ գավառում առկա քաղաքական կացությունը և հետագա անելիքները: Արշավիր Քամալյանը հայտարարեց, որ Ղարաբաղում ստեղծված իրավիճակում դրությունը թերևս կարողանան փրկել տեղական բոլշևիկները՝ իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով և Ղարաբաղը հայտարարելով Խորհրդային Ռուսաստանի մասը, այլ ոչ թե Ադրբեջանի: Աստվածատուր Ավետիսյանը նշեց.«Քանի որ այլևայլ պայմաններ կապել են մեզ Յայաստանի հետ, մենք կարող ենք նրա հետ լինել: Այդ մասին պետք է հայտնել Խորհրդային Ռուսաստանին: Արցախի հայությունը, - այնուհետև ասել է Ա. Ավետիսյանը, - որոշել է երբեք և ոչ մի պայանով իր բախտը չկապել նույնիսկ Խորհրդային Ադրբեջանի հետ՝ պատրաստ լինելով իրագործել քաղաքական այն հասարակարգը, որ ստեղծել է հեղափոխական Ռուսաստանը, շարունակելով իր ինքնապաշտպանությունն ավելի ուժեղացնել, մինչև կստեղծվի քաղաքական կայուն վիճակ»:²⁶ Սակայն Ղարաբաղում այդպիսին բնավ չստեղծվեց: Մայիսի 23-ին Արցախից Յայաստանի կառավարությունը տեղեկություն ստացավ այն մասին, որ Խաչենը, Ջիվանշիրը և Գյուլիստանը, ուր մտել են ռուսական զորքեր,

²⁴ Տե՛ս նույն տեղում, գ.563, թ. 198:

²⁵ Տե՛ս նույն տեղում, գ.563, թ. 193:

²⁶ Տե՛ս **Յ. Աբրահամյան**, Նշվ. աշխ., էջ 43:

իրենց հռչակել են խորհրդային:²⁷ Համաձայն նույն լուրերի, Վարանդան և Դիզակը նույնպես տրամադրված չէին դիմադրություն ցույց տալու ռուսական զորքերին:²⁸ Այո, իրավացի էր Դրոն: Արցախցին բարեհամբույր գտնվեց ռուս զինվորի նկատմամբ: Նա հույս էր տածում, թե Ղարաբաղի խորհրդայնացունը հնարավորություն կտա վերամիավորվել մայր հայրենիքի հետ:

Այսպիսով, քաղաքական հանգամանքները դասավորվեցին այնպես, որ Դրաստամատ Կանայանը ստիպված էր բավարարել կարմիր բանակի հրամանատարության պահանջը՝ հեռանալ Ղարաբաղի սահմաններից: Նա չհեռանալ չէր կարող: Կրկնում ենք՝ Ղարաբաղի ներքին վիճակը անկայուն էր: Գյուղացիությունը բարոյալքվել էր, չէր պայքարում օտարի սպառնացող վտանգի դեմ: Այդ իրողությունը փաստեց նաև մայիսի 24-ին Չանախչի գյուղում Դրոյի, Նժդեհի, Միրիմանյանի և Ա. Միքայելյանի մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունը: Խորհրդակցությունը հանգեց այն եզրակացությանը, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների երևալը, Հայաստանում բոլշևիկյան հեղաշրջման մասին լուրերը մեծապես փոխել են Ղարաբաղի ժողովրդի տրամադրությունը, որը աստիճանաբար կարող է վերածվել թշնամության հայկական զորամասերի դեմ:

Բացի այդ, ռուսական բանակի որոշ զորամասեր Շուշի-Ջանգեզուր խճուղու վրա գրավել էին կարևոր դիրքեր և սպառնում էին փակել հայկական զորամասի նահանջի ճանապարհը: Եվ ոչ միայն այդ պատճառով: Դրոյի չհեռանալու դեպքում նրա զորամասի և ռուսական բանակի միջև կոռիվը դառնում էր անխուսափելի: Իսկ դժվար չէր պատկերացնել, թե Ռուսաստանի հետ զինված առճակատումը ինչ աղետալի հետևանքներ կարող էր ունենալ Ղարաբաղի և Հայաստանի Հարապետության համար:

Այս բոլորը նկատի ունենալով Չանախչիի խորհրդակցությունը որոշում է Ղարաբաղի իշխանությունը հանձնել հայ բոլշևիկներին:²⁹

Մայիսի 26-ին Դրոն իշխանությունը հանձնեց բժիշկ Սաքո Համբարձումյանին և հաջորդ օրը՝ մայիսի 27-ին իր զորամասով ստիպված թողեց Արցախը և վերադարձավ Գորիս՝ ամբողջ զինանոցը և պարենի պահեստները թողնելով Ղարաբաղցիներին: «Հետաքրքիր է,- գրում է Հ. Գևորգյանը,- այդ զենքը Դրոն հանձնել է հայ բոլշևիկների տնօրինությանն այն համոզումով, որ անհրաժեշտության դեպքում հայ բոլշևիկները այդ զենքը կօգտագործեն ի շահ արցախահայության ինքնապաշտպանության կազմակերպման»: Նա մայիսի 28-ին հասավ Գորիս, ապա մի քանի օր անց գնաց Դարալագյազ, իսկ Նժդեհը՝ Ղափան:

Մայիսի 28-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ արցախահայության 10-րդ համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակեց խորհրդային և ստեղծեց հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ: Մինչև հունիսի վերջը հեղկոմներ ստեղծվեցին Լեռնային Ղարաբաղի բոլոր գավառներում ու գյուղերում:

Միաժամանակ ստեղծվեց նաև Դաշտային Ղարաբաղի հեղկոմ՝ Բ. Վելիբեկովի նախագահությամբ, որի կենտրոնը Շուշին էր: Առաջ անցնելով նշենք, որ հու-

²⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, 2-րդ մաս, թ. 336:

²⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 563, թ. 198:

²⁹ Տե՛ս «Հայրենիք» հոկտեմբեր, 1923, էջ 126-127:

նիսի 16-ին Լեռնային Ղարաբաղի և Դաշտային Ղարաբաղի հեղկոմները միավորվեցին, կենտրոնը դարձավ Շուշի քաղաքը: Միացյալ հեղկոմի նախագահ նշանակվեց Բ. Վելիբեկովը, իսկ Ս. Յամբարձումյանը՝ կուսակցության Շուշիի գավառային կոմիտեի առաջին քարտուղար: 1920թ. հոկտեմբերի 1-ին Ս. Յամբարձումյանին փոխարինեց Ս. Ադիգյոզալովը:³⁰

Այսպիսով, ռուսական զենքի օգնությամբ և բուլշևիկյան Ռուսաստանի ղեկավար գործիչների հովանավորությամբ Ադրբեջանն իր ներկայացուցիչներին դրեց Ղարաբաղի կուսակցական և խորհրդային ղեկավար պաշտոններում ու սկսեց այդ կազմակերպությունների միջոցով խաղաղ կերպով, աստիճանաբար նվաճել Ղարաբաղը: Այլ կերպ ասած՝ այն, ինչին չկարողացավ հասնել մուսավաթական Ադրբեջանը թուրքերի և անգլիացիների օգնությամբ, այդ բանին անհամեմատ հեշտությամբ տիրացավ «կարմիր» Ադրբեջանը խորհրդային կարգերի քողի տակ:

DRO IN MOUNTAINOUS KARABAKH (April-May,1920)

H. M. HARUTYUNYAN

In spring, 1920 the government of Azerbaijan was decisively inclined to conquer Artsakh and finally put an end to the aspirations of the native Armenians to rejoin the Republic of Armenia. For that reason the representative of Azerbaijan Khosrov bek Sultanov executed a new villany in Artsakh. In March-April the regular army of Azerbaijan and the Muslim crowd under the command of the Turkish officer razed more than thirty villages and buildings to the ground, killed and tortured peaceful inhabitants.

In April, 14 of the same year at the command of the government of the Republic of Armenia, the Armenian military units penetrated to Artsakh by the side of Zangezur under the command of Dro and emancipated the province from enemy in 3-4 days. The temporary government of Artsakh was created by his own initiative. The ninth conference of the people of Artsakh by the participation of Dro announced once more about the rejoining of Artsakh.

Early in March, 1920 the military units of the 11-th Red Army intruded into the Mountainous Karabakh from the territory of the Soviet Azerbaijan. In March, 5 the representatives of S. Orjonikidze demanded from Dro to take out the Armenian army from Artsakh by the name of Soviet power. Appraising the seriousness and dangerousness of the situation Dro gave the authority to Armenian Bolsheviks and in March, 26 went to Zangezur.

ДРО В НАГОРНОМ КАРАБАХЕ (1920г. апрель-май)

Г. М. АРУТЮНЯН

В 1920 году правительство Азербайджана решительным образом было настроено захватить Арцах, тем самым раз и навсегда поставить точку чаяниям местных армян о воссоединении с Республикой Арменией. С этой целью Азербайджан в лице Хосрова бека Султанова совершил новый геноцид в Арцахе. В месяцах март-апрель регулярная армия и разные мусульмане под руководством турецких офицеров полностью разрушили более трех десятков сел и зданий, убили и подвергли пыткам тысячи мирных жителей.

³⁰ ***Լ. Խորշուդյան***, Պատմագիտության միակ չափանիշը ճշմարտությունն է, «խորհրդային Ղարաբաղ», 19 սեպտեմբերի 1989թ.:

По приказу правительства Республики Армения 14 апреля того же года со стороны Зангезура в Арцах вошли армянские войска под командованием Дро, и в течение 3-4 дней освободили провинцию от врага. По его инициативе было создано Временное правительство Арцаха. 9-й Конгресс арцахских армян с участием Дро вновь объявил о воссоединении с Арменией.

В начале марта 1920 года из территории Советского Азербайджана войска 11-й Красной Армии вторглись в Нагорный Карабах. 5 марта представители С. Орджоникидзе от имени Советского правительства потребовали от Дро вывести армянскую военную силу из Арцаха. Трезво оценив тонкость и опасность ситуации, Дро передает власть армянским большевикам и 26 марта со своим войском переходит в Зангезур.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ԴԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՆՐԱՅՈՂԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու,
Գավառի պետական համալսարանի դասախոս*

Արդի ժամանակաշրջանին բնորոշ է տեղեկատվական ոլորտի թռիչքաձև զարգացումը: Բոլորս քաջ գիտակցում ենք, որ այդ պայմաններում յուրաքանչ-յուր պետության անվտանգությունն ու առաջընթացը մեծապես պայմանավորված է տեղեկատվական համակարգերի զարգացման մակարդակով: Ներկա իրականությունում դժվար է պատկերացնել մարդկային հասարակության գործունեության որևէ բնագավառ, որտեղ հնարավոր լինի տեղեկատվության առավել արագ ստացում և արդյունավետ աշխատանքի կազմակերպում, ինչպես դա կատարվում է տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով: Չնայած այս ոլորտում առկա բազմաթիվ դժվարություններին ու բարդություններին, այնուամենայնիվ որոշակի առաջընթաց նկատելի է: Դրա լավագույն վկայությունը վերջին տարիներին ինտերնետ կապի լայն տարածումն է, ինչը բազմաբովանդակ ասպարեզներ է բացել հաղորդակցման ընդլայնման և տեղեկությունների հանրայնացման ու դրանցից օգտվողների մեծաքանակ բանակի ձևավորման համար: Առաջընթացի այս ալիքը թափանցել է նաև մշակույթի բնագավառ: Ներկայումս համակարգչային տեղեկատվական համակարգերը կարևոր խթան են ծառայում նաև մշակույթի պահպանման և զարգացման համար: Հիշյալ տեխնոլոգիաներն ի զորու են ապահովելու մշակույթային ժառանգության անվտանգ, հարմարավետ ուսումնասիրման ու օգտագործման հնարավորությունն ու անմախաղեպ կերպով մեծացնելու հետազոտական տեղեկատվության հասանելիությունը: Դրանց դերը մեծապես կարևորվում է նաև այն առումով, որ այդ համակարգերն անսահմանափակ հնարավորություններ են ստեղծում մշակույթային ժառանգության պահպանության, հրապարակման և հանրահռչակման համար՝ առավելազույնս խնայողաբար օգտագործելով մարդկային, ֆինանսական ու տարածքա-